

Հավելված

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2013 թվականի ապրիլի 30-ի N 145Ա որոշման

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի
կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի
նոյեմբերի 1-ի N 79Ա որոշմամբ հաստատված
լիցենզիայի պայմանների

ՄԵԹՈԴԻԿԱ

Սակագնային մարժայի հաշվարկման

1. Սակագնային մարժայի հաշվարկման հիմքում դրվում է Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, որի համաձայն անհրաժեշտ հասույթը (ԱՀ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՀ = ԳԷԱ + ԾՊԾ + Մ + Հ + ԱԴՊ + ԹԾ \pm \sum \Delta U_i / 3,$$

որտեղ՝

ԳԷԱ-ն Լիցենզավորված անձի կողմից գնվող էլեկտրաէներգիայի արժեքն է,

ԾՊԾ-ն լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերն են,

Մ-ն լիցենզավորված գործունեության իրականացման համար ներգրավված հիմնական միջոցների մաշվածությունն է,

Հ-ն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերն են (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից), տուրքերը ու պարտադիր այլ վճարները,

ԱԴՊ-ն անհուսալի դեբիտորական պարտքերի մեծությունն է,

ԹԾ-ն լիցենզավորված գործունեության իրականացման համար ներգրավված ակտիվների դիմաց թույլատրելի շահույթի մեծությունն է,

ΔU_i-ն սույն մեթոդիկայի 16-րդ և 19-22-րդ կետերի համաձայն որոշվող i-րդ տարվա փոխհատուցման ենթակա գումարն է,

i-ն տարիների թիվն է, որոնց համար սույն մեթոդիկայի 16-րդ և 19-22-րդ կետերի համաձայն որոշվում է փոխհատուցման ենթակա գումարը, և չի կարող գերազանցել 3-ը:

2. Գնվող էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԳԷԱ} = \frac{(\text{ՆԻ} + \text{ՍԿ}) / (1 - \text{Կ}_{\text{Զ}}/100) + \text{ԱԻ} - \text{Է}_{\text{ԱԲ}} * \text{Կ}_{\text{ԲՑ}}/100}{1 - \text{Կ}_{\text{ԲՑ}}/100} * \text{ԷԳՄՍ},$$

որտեղ՝

ՆԻ-ն Լիցենզավորված անձի կողմից ներքին շուկայում իրացվող էլեկտրական էներգիայի քանակությունն է (կՎտժ),

ՍԿ-ն Լիցենզավորված անձի կողմից սեփական և տնտեսական կարիքների համար ծախսվող էլեկտրական էներգիայի քանակությունն է (կՎտժ),

Կ_Զ-ն Բաշխիչ ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի նկատմամբ Բաշխիչ ցանցում թույլատրելի կորուստի մեծությունն է (%),

ԱԻ-ն Լիցենզավորված անձի կողմից էլեկտրական էներգիայի այլ իրացումներն են (կՎտժ),

Է_{ԱԲ}-ն Արտադրող-Բաշխող սահմանազատման կետերում Արտադրողի կողմից Բաշխողին առաքվող էլեկտրական էներգիայի քանակությունն է (կՎտժ),

Կ_{ԲՑ}-ն Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի ընդունված կորուստի մեծությունն է (%),

ԷԳՄՍ-ն Լիցենզավորված անձի կողմից էլեկտրական էներգիայի գնման միջին կշռության սակագինն է (դրամ/կՎտժ), որը որոշվում է Արտադրողներին, Հաղորդողին, Համակարգի օպերատորին և էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձին (այսուհետ՝ Հաշվարկային կենտրոն)՝ գնվող էլեկտրական էներգիայի (իզորության) և համապատասխան ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարների և գնվող էլեկտրական էներգիայի քանակության հարաբերությամբ:

3. Շահագործման և պահպանման ծախսերում ներառվում են Հանձնաժողովի կողմից թույլատրված 12-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում կատարվող ընթացիկ ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են Լիցենզավորված անձի բնականոն գործունեությունն ապահովելու համար, այդ թվում՝

1) սպասարկման և նորոգման ծախսերը,

2) շահագործման համար անհրաժեշտ նյութերի ծախսերը,

3) աշխատանքի վճարման ծախսերը,

4) վարչական, կառավարման, իրացման և ընդհանուր բնույթի այլ ծախսերը:

Շահագործման և պահպանման ծախսերը որոշվում են ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով դրանց որոշման պահին հայտնի և կանխատեսվող ողջամիտ փոփոխությունները և անկախ փորձագետների եզրակացությունները:

4. Մաշվածությունը հաշվարկվում է գծային եղանակով: Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների արժեքի նկատմամբ կիրառվում է 4 տոկոս մաշվածության նորմա:

5. Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների արժեքներն ամրագրվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

6. Հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն՝ հիմք ընդունելով Սակագնային մարժայի հաշվարկում ընդունված հասույթը և ծախսերը:

7. Անհուսալի դեբիտորական պարտքերը, որոնք Լիցենզավորված անձի կողմից Սպառողներին (Բաժանորդներին) առաքված, սակայն չվճարված էլեկտրաէներգիայի արժեքն են, ներառվում են անհրաժեշտ հասույթի կազմում, բայց ոչ ավելի, քան առաքված էլեկտրաէներգիայի արժեքի 2 տոկոսի չափով:

8. Թույլատրելի շահույթը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԹՇ} = \text{ՇԲ} * \text{ՇՆ}/100,$$

որտեղ՝

ՇԲ-ն շահույթի հաշվարկման բազան է (դրամ),

ՇՆ-ն ակտիվների շահութաբերության նորման է մինչև հարկումը (%):

9. Շահույթի հաշվարկման բազան որոշվում է որպես Սակագնային մարժայի վերանայմանը նախորդող տարիներին Լիցենզավորված անձի կողմից կատարված Ներդրումների ու շրջանառու կապիտալի հանրագումարի և կուտակված մաշվածության տարբերություն: Շահույթի հաշվարկման բազայում չեն ընդգրկվում այն ներդրումները, որոնք իրականացվում են դրամաշնորհների կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունից, կամ Հայաստանի Հանրապետության կառավարության միջնորդությամբ ստացված արտոնյալ վարկերի հաշվին: Նման վարկերի սպասարկման ծախսերը հաշվի են առնվում շահագործման և պահպանման ծախսերում: Շահույթի

հաշվարկման բազայում ներառվող շրջանառու կապիտալի մեծությունը կհաշվարկվի որպես լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների տարբերություն, որոնք որոշվում են՝ ելնելով Հանձնաժողովի հետ համաձայնեցված դրանց շրջանառության ժամկետներից: Վարկերի սպասարկման համար անհրաժեշտ դրամական միջոցները հաշվի չեն առնվի:

10. Հանձնաժողովն ակտիվների շահութաբերության նորման սահմանում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում ռիսկի նույն մակարդակով գործող ընկերությունների շահութաբերության վերլուծությունից, բայց ոչ պակաս, քան 12 տոկոսը (հարկումից հետո):

11. Սակագնային մարժան որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ՍՄ = ԱՀ/Ի - ԷԳՄՍ,$$

որտեղ՝

ՍՄ-ն Սակագնային մարժան է (դրամ/կՎտժ),

Ի-ն Լիցենզավորված անձի կողմից իրացվող էլեկտրական էներգիայի քանակությունն է (կՎտժ):

12. Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող էլեկտրական էներգիայի թույլատրելի կորուստները բաղկացած են Բաշխիչ ցանցում և Հաղորդման ցանցում առաջացող թույլատրելի կորուստներից:

13. Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող՝ Բաշխիչ ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի նկատմամբ Բաշխիչ ցանցում թույլատրելի կորուստների մեծությունը կհաշվարկվի Լիցենզիայի պայմանների 4.10 կետում ամրագրված ընթացակարգով համաձայնեցված՝ Տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեթոդիկայի համաձայն: Տարեկան կտրվածքով հաշվարկված և Լիցենզիայի պայմանների 4.10 կետում ամրագրված ընթացակարգով համաձայնեցված հաշվարկային կորուստները, որպես տեխնիկական կորուստների և հաշվառքի սարքերի սխալանքով պայմանավորված առևտրային կորուստների գումար, կներառվեն Սակագնային մարժայի հաշվարկում: Այլ բնույթի առևտրային կորուստները Սակագնային մարժայի հաշվարկում կներառվեն լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների, ինչպես նաև կորուստների նվազեցմանն ուղղված Լիցենզավորված անձի ծրագրերի (այդ թվում՝ ներդրումային) իրականացման արդյունքների ուսումնասիրությունից ելնելով: Սակայն, ամեն դեպքում այն Սակագնային մարժայի հաշվարկում կներառվի գնվող էլեկտրական

էներգիայի 1 տոկոսից ոչ պակաս չափով և ոչ ավելի, քան նախորդ տարվա փաստացի կորուստների և հաշվարկային Տեխնոլոգիական կորուստների տարբերության չափով:

14. Յուրաքանչյուր հաշվարկային տարում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորստի մեծությունը ներկայացվում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից՝ հաշվի առնելով հաշվարկային տարում էլեկտրական էներգիայի կանխատեսվող արտադրության և առաքման հաշվեկշիռը:

15. Սակագների՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքով պայմանավորված բաղադրիչները հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվարկներում ընդունված փոխարժեքի հիման վրա և սահմանվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Եթե Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներով փաստացի միջին փոխարժեքի շեղումը հաշվարկայինից գերազանցում է 3 տոկոսը, ապա կատարվում է Սակագնային մարժայի ճշգրտում, բայց ոչ հաճախ, քան 6 ամիսը մեկ անգամ: ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքի փոփոխությունը հաշվի կառնվի միայն Սակագնային մարժայի հաշվարկում ներառված ԱՄՆ դոլարով կատարված ծախսերի, մաշվածության և շահույթի մասով: Հայաստանի Հանրապետության դրամով կատարվող ծախսերի փոփոխությունը՝ կախված ներքին շուկայում գների փոփոխությունից, հաշվի կառնվի սակագների վերանայման համար սահմանված կարգով:

16. Լիցենզավորված անձի հաշվարկային անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի (ներառյալ՝ Հաղորդողի, Համակարգի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների արժեքը) տարբերությունը (U_z) համեմատվում է փաստացի տվյալներով ձևավորված մեծության հետ (U_Φ), և նշված մեծությունների տարբերությունը ($\Delta U = U_z - U_\Phi$) ենթակա է փոխհատուցման սպառողներին կամ Լիցենզավորված անձին:

17. Փոխհատուցման ենթակա գումարը (ΔU) վերադարձվում է հավասարաչափ երեք տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարվա Սակագնային մարժայի հաշվարկում ներառելով մեկ երրորդի չափով:

18. Սկսած 2012 թվականից հաշվարկային տարին ընդունվում է ապրիլի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածը:

19. Փաստացի տվյալներով ձևավորված հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերությունը (U_Φ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{\Phi} = U_{\Phi 1} + U_{\Phi 2} + U_{\Phi 3} :$$

20. $U_{\Phi 1}$ մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{\Phi 1} = \frac{\zeta_{\Phi 1} - (E_{կվտմ1} + P_{էՑ1})}{(1 - U_{Ց\Phi 1}/100)} - \frac{(1 - U_{Ց\Phi 1}/100)}{(1 - U_{Ց\zeta}/100)} - E_{\zeta q1} - \sigma_{\Phi 1},$$

որտեղ՝

$\zeta_{\Phi 1}$ -ը հաշվարկային տարվան նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ էլեկտրական էներգիայի իրացումից ձևավորված փաստացի հասույթն է (դրամ),

$E_{կվտմ1}$ -ը հաշվարկային տարվան նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ Արտադրողներից և Ներկրողներից փաստացի գնված էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ),

$P_{էՑ1}$ -ը հաշվարկային տարվան նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման արժեքն է (դրամ),

$U_{Ց\Phi 1}$ -ը հաշվարկային տարվան նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ Բաշխիչ ցանց մուտք գործած էլեկտրական էներգիայի նկատմամբ փաստացի ձևավորված կորուստի մեծությունն է (%),

$U_{Ց\zeta}$ -ն հաշվարկային տարվան նախորդող տարվա համար Բաշխիչ ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի նկատմամբ Սակագնային մարժայի հաշվարկում ընդունված կորուստի մեծությունն է (%),

$E_{\zeta q1}$ -ը հաշվարկային տարվան նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ Արտադրողներից փաստացի գնված էլեկտրական հզորության արժեքն է (դրամ),

$\sigma_{\Phi 1}$ -ը հաշվարկային տարվան նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի և էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման փաստացի արժեքն է (դրամ):

21. $U_{\Phi 2}$ մեծությունը որոշվում է որպես հաշվարկային տարվան նախորդող տարվա հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար հաշվարկային անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի (ներառյալ՝ Հաղորդողի, Համակարգի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների արժեքը) տարբերություն:

22. 2013 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար U_{Φ} մեծությունը հաշվարկելիս $U_{\Phi 3}$ -ը ընդունվում է հավասար զրոյի: Սկսած 2014 թվականի ապրիլի 1-ից $U_{\Phi 3}$ մեծությունը որոշվում է որպես հաշվարկային տարվան նախորդող տարվա սակագների հաշվարկներում ներառված $U_{\Phi 2}$ -ի փաստացի տվյալների հիման վրա ճշգրտված մեծության և նույն սակագների հաշվարկներում ներառված $U_{\Phi 2}$ -ի տարբերություն: